Հայք

Հայաբնակ

թողարկում

1997 հոկտեմբեր 25

ՀՅԾ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ
ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ է 1989 ԹՎԱԿԱՆԻՑ
#184 (1010), ԳԻՆԸ՝ 75 ԴՐ.
ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ 2, ՀԵՌ. 527701
ARMENIAN NATIONAL MOVEMENT
"HAYK" DAILY
ARSHAKOUNIATS 2
TEL: 527701
E-MAIL: HAYK@ARMINCO.PR.COM

ԱՌՈՆՑ

ՉԱՐԵՆՑԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

ՉԱՐԵՆՑ-100

...Գուցե ճիշտ որ՝ միրաժ է Նաիրին. ֆիկցիա, միֆ. ուղեղային մորմոք. արշ հիվանդություն... Իսկ նրա փոխարեն-կա այսօր մի երկիր, որ կոչվում է Հայաստան...

էջ 12

ԻՆՉՊԵՍ ՓԱԿՎԵՑ ՆԱԻՐԻՏԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Եվ ահա հենց այստեղ տեղից դուրս ցատկեց Սուրեն Հարությունյանը եւ հայտարարեց այն մասին, որ «Նաիրիտը» փակվում է...

էջ 3

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ...

ՍՈՃԻՈՒՄ

Հայաստանյան կազմակերպություններին բնորոշ են թղթարարությունը, քաղաքականը, երբեմն ուղեկցվելով բարոյական չափանիշների ոչնահարմամբ եւ վանողականությամբ:

էջ 6

ԹԱՄԱՆՅԱՆԻ «ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ»...

ՍԱՅՐԱՔԱՂԱՔ

Ցավոք, Թամանյանի հեսՇորդները Երեւանի կառուցապատումը դուրս բերեցին քամանյաՇական նախասեղծ ուղեծրից...

էջ 9

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՆՊԱՏԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Գործ
ԲՈՒԴՈՒՆՅԱՆԻ

էջ 7

Հիշո՞ւմ եք հանրաճանաչ Օլեգ Պոդոլի մահաճ խաղը լույսի հետ: Ծաղրածուն՝ տարածությունից «որսում» է լույսի շերտը, «տաղալուն» գետին, հետո ափերով սեղմում է, փոքրացնում եւ «տեղավորում» լուցկու տուփի մեջ: Խավարը լցվում է հրվագիծ ծափահարություններով... Այսպես Խեղկատակն ու Խավարը ճարտկորեն պատժում են Լույսին...

Մեր հասարակությունն իր այսօրվա հոգեվիճակով միաչափանի հասարակություն է: Ադամանդների, զրկանքների, մեծախոհների եւ խաչագողերի ներկա բազմազանության մեջ բոլորիս միավորողը նույնն է՝ *զգացմունքի անորոշությունը:* Ո՛չ ունեւորը, ո՛չ ունեզուրկը, ո՛չ գիտունը, ո՛չ անգետը եւ ո՛չ մեկս չգիտենք պետք է ծիծաղե՞լ, թե լաց լինել, հրվե՞լ, թե՞ ողբալ: Չգիտենք, որովհետեւ ոչ ոք (թեկուզ որեւէ ծաղրածու) մեզ չի հրահանգում ե՞րբ ուրախանալ եւ ե՛րբ տխրել: Այս է մեր «աղոհով անցյալի» եւ «անաղոհով ներկայի» էական տարբերությունը:

«Ես մտածում եմ, հետեւապես գոյություն ունեմ» սկզբունքը այն հասարակությունների հաղարական ախարհայացքի անկյունաքարն է եղել, որոնք այսօր իրենց կամքն են թելադրում ախարհին: Իսկ մե՞րը... «Ես ասում եմ, հետեւապես գոյություն ունեմ. հետեւանքների համար պատասխանատու չեմ»: Այսպես, մեր ազգային հոգեբանության մեջ բարձրագույն, իմացական ունակությունները օտարելով եւ հաճախ միայն ծայրահեղ բնազդները թեժացնելով, կամա, թե ակամա մեր հավաքական գիտակցությունը պահել են մթնշաղային վիճակում:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎՈՒՄ ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ԲԱԽՈՒՄՆԵ՞Ր ԵՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՎՈՒՄ

«Ազդակ» թերթը օտարնակում է լուսաբանել Ադրբեջանի հյուսիսում ստեղծված դրությունը: Նշվում է «Սադվալի» ֆինանսական աղբյուրների մասին եւ հոլովվում են Ռուսաստանի՝ ու Հայաստանի անունները: Թերթի կարծիքով, Հայաստանի հատուկ ծառայությունների հետ մեկտեղ կան նաեւ այլ ուժեր, որոնք ցանկանում են հակամարտություն ստեղծել այդ տարածաշրջանում: Դրանց թվում նշվում են հյուսիսային հատվածի գծով «Սադվալի» կոորդինատոր Մուսաֆաեւը եւ գինյալ խմբավորումներից մեկի ղեկավար Սաթդախովը:

Հաղորդվում է, որ եթե նկատի առնվի այն հանգամանքը, որ Ռուսաստանը չի կարող տիրանալ Կասպից ծովի իրավական կարգավիճակին, ապա հյուսիսում կայունության խախտման հավանականությունը մեծանում է: Հիշեցնենք, որ Ռուսաստանի նեղգործնախարար Կուլիկովը Անվտանգության խորհրդի նիստերից մեկում հայտարարել էր, որ որոշ արեւմտյան երկրներ Ռուսաստանի հարավում ընդհարում են նախապատրաստում ազգային հողի վրա:

Հոդվածում նշվում է, որ վերջին իրադարձություններին Դաղստանի գինյալ խմբավորումների հետ միասին մեղսակից են Մոսկվայի շահագրգիռ շրջաններ: Նշվում է Դաղստանի ամենախոշոր գինյալ խմբավորումներից մեկի ղեկավարի Խաչալաեւի անունը: Նա նաեւ համարվում է Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայության գործակալը եւ հիմնական թեկնածուներից մեկը եկող տարի Դաղստանում նախատեսված նախագահական ընտրություններում: Հեղինակը նշում է, որ մեկ այլ թեկնածու՝ Աբդուլլաեւիրովը, շահագրգռված է, որ կովկասը եւ մասնավորապես Ադրբեջանը պահպանվեն Ռուսաստանի ազդեցության ոլորտում, եւ հաղորդում է, թե ընտրությունների շեմին Դաղստանում իրադարձությունները կարող են զարգանալ մի քանի ուղղությամբ: Հոդվածագիրը նաեւ գրում է, թե «Սադվալի» սպասները ամսական 800 դոլար աշխատավարձ են ստանում, իսկ գինվորները՝ 500 դոլար:

Արմենպրես

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ ԵՎ ՀՈՒՆԱՍՏԱՆԻՆ ԶՍՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԿՈՉ է ԱՐԵԼ

«Մոսկվայում ափսոսանքով են նշում իրադրության նոր սրումը Հեյդարի ծովի շրջանում, որի առիթ է հանդիսացել այնտեղ վերջին ժամանակներս նկատվող ռազմական ակտիվության ուժեղացումը, որն արտահայտվել է մասնավորապես Թուրքիայի ռազմաօդային ուժերի ինքնաթիռների վտանգավոր խուսաթռիչքներով»: Այսպիսի հայտարարությամբ հանդես է եկել ՌԴ արտգործնախարարության տեղեկատվության ու մամուլի գլխավոր Գենադի Տարասովը:

Ռուսասանը, նշել է նա այդ առնչությամբ, ԱՄԱՐԱՅԻՆ եւ Աթենքին կոչ է անում անհրաժեշտ զսպվածություն ու պատասխանատվություն ցուցաբերել, որպեսզի թույլ չտրվի վտանգավոր արկայուսնացում այդչափ զգայուն տարածաշրջանում:

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԾ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Երեկ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն ընդունեց Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի պատվիրակությանը: Հանդիպմանը ներկա էր ՀՀ Աժ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Հովհաննես Իգիթյանը:

Զրույցի ընթացքում նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, պատասխանելով հյուրերին հետաքրքրող հարցերին, մասնավորապես ներկայացրեց Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման Հայաստանի դիրքորոշումը եւ Թուրքիայի հետ հարաբերությունների նորմալացման հնարավորությունները:

Հայաստանի ներքին խնդիրներին ու նվաճումներին վերաբերող հարցին պատասխանելով, նախագահը կարեւորեց ժողովրդի ծանր սոցիալական վիճակը, այն, որ մեկ միլիոն մարդ այսօր Հայաստանում չէավոր է, ցածր ապրատավարձ է ստանում, աղքատված չէ ապրատանքով: Որպես նվաճում նախագահը նշեց պետական շինարարության ընթացքը եւ ներքին կայունությունը:

Արմենպրես